# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

**ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 23 ապրիլի 2021թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | Կարապետ Հակոբյան |
| Անդամներ | Նորայր Պողոսյան |
| | Միշա Երանոսյան |
| Գնահատող հանձնաժողովի քարտուղար | Բաբկեն Աբրեյան |

Հանձնաժողովը քննարկեց ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարության ու հրավերի տեքստերը և գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի բացման ու գնահատման նիստի անցկացման օրը, ժամն ու վայրը:

Հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*Հաստատել Աշոցքի համայնքապետարանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման (ծածկագիրը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14) հայտարարության և հրավերի տեքստերը:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 2

*Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի բացման և գնահատման նիստն անցկացնել 2021թ. ապրիլի 30-ին, ժամը 11:00-ին Աշոցքի Հրապարակ 1 հասցեում գտնվող Աշոցքի համայնքապետարանի վարչական շենքում:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | ________ | Կարապետ Հակոբյան |
| Հանձնաժողովի անդամներ | ________ | Նորայր Պողոսյան |
| | ________ | Միշա Երանոսյան |
| Հանձնաժողովի քարտուղար | ________ | Բաբկեն Աբրեյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

գ. Աշոցք 30 ապրիլի 2021թ. ժամը 11:00 – 3 մայիսի 2021թ.

*Մասնակցում էին՝*
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կարապետ Հակոբյան
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Նորայր Պողոսյան
Միշա Երանոսյան
գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների համար սահմանված նախահաշվային գներն ըստ չափաբաժինների.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Նախահաշվային գինը |
|---|---|---|
| 1 | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան և Զույգաղբյուր բնակավայրերի համայնքային կենտրոնների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | 700000 |
| 2 | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սարագյուղ, Բավրա, Ղազանչի բնակավայրերում բնական գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | 7900000 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակցի անվանումը | Հասցե | Հեռախոս |
|---|---|---|
| «ԼՍ նախագիծ» ՍՊԸ | ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 122/100 | 091 81-65-15<br>094 14-09-00 |
| Ա/Ձ Անահիտ Գևորգյան | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մուսայելյան փող. 49/2 | 0312 3-88-88<br>043 52-25-81 |
| «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Բոշնաղյան փող., 1-ին նրբ., տուն 8 | 091 91-62-67 |

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտերը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ մասնակիցներից երկուսի հայտերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Ա/Ձ Անահիտ Գևորգյանը հրավերի 2.5 կետով սահմանված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու նպատակով ներկայացրել էր միայն մեկ մասնագետի վերաբերյալ փաստաթղթեր (անձնագիր, որակավորումը հավաստող փաստաթուղթ, գրավոր համաձայնություն), մինչդեռ հրավերով պահանջվում էր փաստաթղթեր ներկայացնել առնվազն երկու մասնագետի համար:

«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի հայտում բացակայում էին հրավերի 2.4 և 2.5 կետերով սահմանված պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը. նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) և այդ պայմանագրի (համաձայնագրի) կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները, առնվազն երկու մասնագետի գրավոր համաձայնությունները, անձնագրերի ու որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն էին.

ՀՀ դրամ

| Մասնակից | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|
| Չափաբաժին 1՝ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան և Զույգաղբյուր բնակավայրերի համայնքային կենտրոնների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | | | |
| «ԼՍ նախագիծ» ՍՊԸ | 500000 | - | 500000 |
| Չափաբաժին 2՝ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սարագյուղ, Բավրա, Ղազանչի բնակավայրերում բնական գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | | | |
| Ա/Ձ Անահիտ Գևորգյան | 7300000 | - | 7300000 |
| «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ | 4770000 | - | 4770000 |

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*Մինչև 2021 թվականի մայիսի 3-ի ժամը 15:00-ն կասեցնել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստը և ծանուցել Ա/Ձ Անահիտ Գևորգյանին և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

***

2021թ. մայիսի 3-ին վերսկսված նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում Ա/Ձ Անահիտ Գևորգյանի և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկվել են:

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտ պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,

2. բացված ծրարներում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին (համապատասխանում է/չի համապատասխանում) | Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին (համապատասխանում է/չի համապատասխանում) |
|---|---|---|
| «ԼՍ նախագիծ» ՍՊԸ | Համապատասխանում է | Համապատասխանում է |
| Ա/Ձ Անահիտ Գևորգյան | Համապատասխանում է | Համապատասխանում է |
| «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ | Համապատասխանում է | Համապատասխանում է |

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

*Բոլոր մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատել բավարար ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

*Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի*
*1-ին չափաբաժնի մասով՝*
*ա) ընտրված մասնակից ճանաչել «ԼՍ նախագիծ» ՍՊԸ-ին՝ որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ և գնման հայտով սահմանված նախահաշվային գինը չգերազանցող գնային առաջարկ ներկայացրած մասնակից,*
*2-րդ չափաբաժնի մասով՝*
*ա) ընտրված մասնակից ճանաչել «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ին՝ որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,*
*բ) 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Անահիտ Գևորգյանին:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ «ԼՍ նախագիծ» ՍՊԸ-ի և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի հետ կնքել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պայմանագրեր:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 5

*Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հանձնարարեց քարտուղարին իրավերով սահմանված անգործության ժամկետը լրանալուց հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցներին ուղարկել ծանուցումներ՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկները և պայմանագրերի նախագծերը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | _______________ | Կարապետ Հակոբյան |
| Հանձնաժողովի անդամներ | _______________ | Նորայր Պողոսյան |
| | _______________ | Միշա Երանոսյան |
| Հանձնաժողովի քարտուղար | _______________ | Բաբկեն Աբրեյան |